

ՔՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(1980—1990 ԹԹ.)

Գ. Ա. ՂԱՐԻԹՅԱՆ, Շ. Ա. ՄԱՐԶՊԱՆՅԱՆ

1. ՔՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Հայաստանում, ինչպես նախկին Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում, բնակչության եկամուտները ձևավորվում էին բաշխման հարաբերությունների այն համակարգով, որը պայմանավորված էր բացարձակորեն կենտրոնացված պլանային տնտեսության և պետության սոցիալական քաղաքականության մենաշնորհային համակարգով:

Բնակչությունը, ընտանիքը եկամուտներ ստանում էին երեք հիմնական աղբյուրներից և համապատասխանաբար երեք հիմնական ձևերով, քանի որ եկամուտների դոյացման յուրաքանչյուր աղբյուր իրենով իսկ պայմանավորում էր նրա առանձնահատուկ տեսակը. և բնույթը: Բաշխման հարաբերությունների այդ համակարգի բովանդակության վերազնահատումը և նորովի իմաստավորումը հատուկ ուսումնասիրության առարկա է, և այն մեր հետազոտության խնդիրը չէ: Մենք որպես փաստ արձանագրում ենք, և դա իրողություն էր, որ նշված ժամանակահատվածում բնակչությունը, ընտանիքը իրենց եկամուտները ստանում էին պետական ձեռնարկություններից և հիմնարկություններից աշխատավարձի ձևով, կոլտնտեսություններից՝ աշխատանքային վճարումների (աշխօր) ձևով, անձնական օժանդակ տնտեսություններից՝ զուտ արդյունքի ձևով, և պետությունից, հիմնարկ-ձեռնարկություններից՝ տարբեր տեսակի և բնույթի տրանսֆերտների՝ թոշակների, նպաստների և անվճար ու սրտոնյալ ծառայությունների ձևով. վերջիններս բոլորը միասին կոչվում էին հանրային սպառման ֆոնդեր:

Բաշխման այդ համակարգով էլ պայմանավորված էին անձնական եկամուտների ու սպառման չափերը և կառուցվածքը, որոնք առավել ամբողջական ձևով արտացոլվում էին ընտանիքի բյուջեի մեջ: Այդ պատճառով մենք օգտուվել ենք ընտանիքների բյուջեների հետազոտության այն նյութերից, որոնք պատկերացում են տալիս ինչպես նրանց եկամուտների չափերի ու կառուցվածքի, այնպես էլ սպառման մակարդակի ու կառուցվածքի, այսինքն՝ նրանց կենսամակարդակի մասին:

Ընտանիքների բյուջետային հետազոտությունները Խորհրդային Միությունում ընթացել են երեք հիմնական մեթոդներով: Տիրապետողը եղել է կենտրոնական վիճակագրական վարչության կողմից անցկացված մշտական պաշտոնական հետազոտությունը, որը, սակայն, ուներ այն թերությունը, որ հետադոտման դաշտը սահմանափակ էր, իսկ հետազոտվող ընտանիքները կայուն, անփոփոխ էին: Դրա հետևանքով այն երթարկվում էր հատուկ «կարգավորման», «խմբագրման», և իրական պատկերը խեղաթյուրվում էր: Սա-

կայն դրանով հանդերձ եկամուտների կառուցվածքի, դրանում կատարվող փոփոխությունների ու միտումների հետազոտման տեսակետից այն որոշ արժեք ունենք:

Բյուջեների հետազոտման մյուս, առավել արդյունավետ մեթոդը միանվագ հետազոտությունների (մարտյան, սեպտեմբերյան հետազոտությունները) անցկացումն էր: Նախ, անհամեմատ մեծ էր հետազոտման դաշտը, որի շնորհիվ բարձր էր ներկայացուցչության աստիճանը: Այնուհետև, հարուստ էր հետազոտման ծրագիրը և ստացվող տեղեկատվությունը: Եվ երրորդ՝ ավելի դժվար էր «կարգավորել» և «խմբագրել»: Այդ հետազոտությունները հատկապես հարուստ տեղեկություններ էին տալիս միջին շնչային եկամտի և սպառման ցուցանիշներով ընտանիքների տարբերակման և նրանց իրական նյութական ապահովածության, ինչպես նաև գույքի, բնակարանային պայմանների և սոցիալական այլ պայմանների մասին: Այդպիսի լայնածավալ ու արժեքավոր վերջին հետազոտությունները կազմակերպվել են 1981 և 1989 թվականներին: Սակայն դրանց տվյալներն անմատչելի էին հետազոտողների լայն շրջանների համար, քանի որ փակ էին: Ուստի, ստորև բերվող նյութերը և դրանց վերլուծությունը նոր լույս են սփռում Խորհրդային Հայաստանի վերջին տասնամյակի (1980—1990) բնակչության կենսամակարդակի, եկամուտների տարբերակման, ընտանիքների թերապահովվածության և անգամ աղքատության վերաբերյալ:

Ընտանիքների բյուջեների հետազոտման հաջորդ մեթոդը մոմենտային դիտարկումն է: Այդ մեթոդով հետազոտությունները կատարվել են պրոֆ. Ա. Կարապետյանի գլխավորությամբ ու նախաձեռնությամբ (1958, 1968 թթ.) և Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի կողմից (1995 թ.): Այդպիսի դիտարկումը նույնպես արդյունավետ է և ունի այն առավելությունը, որ հետազոտման ծախսերը մեծ չեն, միանվագ է և կարող է ընդգրկել մեծ թվով ընտանիքներ համապատասխան ընտրությամբ (գյուղի ու քաղաքի, սոցիալական խմբերի և այլ կտրվածքներով)՝ ապահովելով ներկայացուցչությունը և արդյունքների հավաստիությունը: Մոմենտային դիտարկման մեթոդով 1996 թ. ընտանիքների բյուջեների հետազոտություն է կատարվել Հայաստանի ամերիկյան համալսարանի տնտեսական քաղաքականության ուսումնասիրության և վերլուծության կենտրոնի՝ «Սեփրա» կազմակերպության կողմից:

Ընտանիքների բյուջեների՝ վերը նշված բոլոր հետազոտությունների արդյունքները կարևոր են Հայաստանի բնակչության կենսամակարդակի տեղաշարժերը վերլուծելու համար ինչպես 1980—1990 թթ., այնպես էլ 1990 թվականից հետո ընկած ժամանակահատվածում:

Ինչո՞ւ է անհրաժեշտ անդրադառնալ անցյալին՝ 1980—1990 թթ. վիճակին: Դա բացատրվում է մի քանի հանգամանքներով: Առաջին, առանց ճիշտ պատկերացում ունենալու 1980-ական թվականների իրավիճակի մասին, չենք կարող գնահատել և իմաստավորել վերջին տարիներին բնակչության կենսամակարդակի իրական փոփոխությունները: Երկրորդ, այդպիսի ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի համեմատական վերլուծության միջոցով բացահայտելու բնակչության եկամուտների կառուցվածքային տեղաշարժերը և դրա հետ կապված՝ իրական փոփոխությունները ծախսումների ու սպառման մեջ: Այնուհետև, դա անհրաժեշտ է, որպեսզի ճիշտ գնահատվի անցած տասնամյակում (1980—1990 թթ.) ընտանիքների տարբերակումը ըստ շնչային եկամուտների, ինչպես նաև դրանցում տեղի ունեցած իրական տե-

դաշարժերը և միտումները: Եվ վերջապես, խիստ անհրաժեշտ է նաև պարզել, թե նախկին համակարգի ինքնարժեքի ուժը ի՞նչպես է ներգործում ընտանիքների կենսապայմանների փոփոխությունների վրա:

Նախկին Խորհրդային Միությունում 1960-ական թթ. ի վեր որպես համաշխարհային մասշտաբով սոցիալիզմի հաղթանակին հասնելու ուղիներ ընտրվեցին տնտեսական աճով աշխարհում առաջին տեղը դուրս գալը և այդ հիմքի վրա ամենաբարձր կենսամակարդակի ապահովումը: Այդ խնդիրներից և ոչ մեկը չիրականացավ: Սակայն, փաստ է և այն, որ շնորհիվ որոշակի տնտեսական աճի և 70-ական թթ. երկրից մեծ ծավալներով արտահանվող նավթի և գազի բարձր գների, հնարավոր դարձավ ապահովել աշխատունակ բնակչության բարձր զբաղվածություն, սպառողական ապրանքների և ծառայությունների գների հարաբերականորեն կայուն մակարդակ, աշխատավարձի և հանրային սպառման ֆոնդերի որոշ աճ, և հասնել բնակչության բարեկեցության որոշ մակարդակի, որը, իհարկե, զուգակցվում էր օրավուր սրվող սոցիալական լուրջ պրոբլեմներով:

2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՃԸ

Ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանում, քաղաքային ընտանիքների հիմնական եկամուտը աշխատավարձն էր կամ, այլ կերպ ասած, աշխատանքի դիմաց վարձատրությունը: Ընդ որում, աշխատավարձը դիտվում էր ոչ թե որպես աշխատանք ռեսուրսի գինը, այլ որպես ըստ աշխատանքի բաշխման ֆոնդում բանվոր-ծառայողների բաժինը՝ կախված նրանց ծախսած աշխատանքի քանակից և որակից: Ուստիև աշխատավարձը, որպես այդպիսին, խիստ կենտրոնացված պլանային տնտեսության համակարգում ըստ էության չէր էլ ենթարկվում աշխատաշուկայի պահանջարկի և առաջարկի գործոնների ազդեցությանը:

Վիճակագրական տվյալները վկայում են (տե՛ս աղյուսակ 1), որ աշխատավարձը եղել է բանվոր-ծառայողների ընտանիքների հիմնական եկամուտը, իսկ նրա տեսակարար կշիռը ընտանիքի եկամտում որոշ չափով աճել է՝ հասնելով շուրջ 84 %-ի: Այստեղից էլ՝ բանվոր-ծառայողների ընտանիքների կենսամակարդակը ամենից առաջ և ամենից ավելի կախված էր ընտանիքի բոլոր անդամների միագումար աշխատավարձից: Աշխատավարձից հետո իրենց տեսակարար կշռով երկրորդ տեղը բռնում են կենսաթոշակների, թոշակների, նպաստների և այլ ձևերով սպառման հանրային ֆոնդերից ստացվող եկամուտները: Դրանց բաժինը ընտանիքների համախառն եկամուտների մեջ կազմել է գրեթե 8,5 %: Սակայն հարկ է նշել, որ սպառման հանրային ֆոնդերից ստացվող բոլոր եկամուտները (դրամական վճարումների ու հատկապես անվճար ծառայությունների ձևով) լրիվ ծավալով չեն արտացոլվել հիշատակված հետազոտության մեջ: Իրականում բազմաթիվ հատուկ, առավել ներկայացուցչական և ճիշտ մշակված հետազոտությունների արդյունքներով վերը նշված եկամուտների բաժինը միջին հաշվով կազմել է ընտանիքների համախառն եկամտի մոտ 20 %-ը:

Տարի-ներ	Ամբողջ համախառն եկամուտ		Ա յ դ թ վ ու մ							
			Աշխատավարձ		Կենսաթոշակ, թոշակ և նպաստներ		Եկամուտներ անձնական օժ. տնտեսությունից		Եկամուտներ այլ աղբյուրներից	
	առբլի	%	առբլի	%	առբլի	%	առբլի	%	առբլի	%
1970	3060,1	100	2475,1	80,9	233,1	7,6	209,8	6,9	142,1	4,6
1975	3757,3	100	2946,2	78,4	351,7	9,4	213,9	5,7	245,5	6,5
1980	4465,9	100	3689,2	82,6	335,0	7,5	238,5	5,3	203,2	4,6
1985	4803,0	100	4010,1	83,4	407,8	8,5	228,0	4,7	165,1	3,4

Այլ բնույթ ունեւր գյուղական բնակչութւյան ընտանիքների եկամուտների կառուցվածքը: Նախ, դրանք որոշակի հատկանիշներով բաժանվում էին երկու խոշոր խմբերի՝ կոլտնտեսականների ընտանիքների և սովխոզների աշխատողների ընտանիքների: Վերջիններիս եկամուտների բնույթը և աղբյուրները ավելի մոտ էին քաղաքների բանվոր-ծառայողների ընտանիքներին: Այստեղ տարբերությունը հիմնականում գյուղական ընտանիքների ընդհանուր եկամուտների կազմում անձնական օժանդակ տնտեսություններից ստացվող եկամտի ավելի մեծ տեսակարար կշիռն էր:

Ինչ վերաբերում է կոլտնտեսականների ընտանիքներին, ապա այստեղ ունենք էական տարբերություններ, ինչպես եկամտի սոցիալ-տնտեսական բնույթի, այնպես էլ համախառն եկամուտների կառուցվածքի տեսակետից (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ կոլտնտեսականների ընտանիքների եկամուտները ստացվել են ավելի շատ աղբյուրներից և ավելի բազմապիսի ձևերով: Այսպես, կոլտնտեսականների աշխատանքի վճարից հետո նրանց ընտանիքների համախառն եկամուտների կազմում իրենց տեսակարար կշիռով երկրորդ տեղը զբաղեցրել են անձնական օժանդակ տնտեսություններից ստացվող եկամուտները: Բացի դրանից, կոլտնտեսականների համար եկամտի կաշույն աղբյուր էր աշխատավարձը (շուրջ 20%), որ նրանք ստանում էին պետական հիմնարկ-ձեռնարկություններից: Ինչ վերաբերում էր սպառման հանրային ֆոնդերից ստացվող եկամուտների տեսակարար կշիռն (ավելի քան 9%), ապա այն հետու է իրական վիճակն արտացոլելուց: Ճիշտ է, դրանց բաժինը կոլտնտեսականների ընտանիքների բյուջեներում ավելի փոքր էր, քան քաղաքային բնակչության մոտ, սակայն կոլտնտեսականները անվճար կամ արտոնյալ պայմաններով նույնպես օգտվել են սպառման հանրային ֆոնդերի միջոցով տրամադրվող ծառայությունների սպառումից (կըրթութւյուն, առողջապահութւյուն և այլն):

Ընտանիքների եկամուտները տարբերակվում են նաև կախված ընտանիքների ժողովրդագրական նկարագրից, այսինքն՝ ընտանիքի կազմից, նրա անդամների թվից, շափահասների և անշափահասների, խնամառուների և եկամուտ վաստակողների հարաբերակցություններից և այլն: Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ ինչքան մեծ է ընտանիքը, ինչքան շատ են երեխաները, այնքան փոքր է աշխատավարձի բաժինը համախառն եկամտում, և ընդհակառակը՝ մեծ է սպառման հանրային ֆոնդերից ստացվող եկամուտների բաժինը:

¹ Աղյուսակը կազմված է «Բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների բյուջեները 1970, 1975, 1980—85 թթ.» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա (Կրեան, 1986, էջ 10, 11):

Ընդունեականների բնագրի բնագրի համախառն եկամուտների կառուցվածքը (տարեկան միջինը՝ բնագրի հաշվով)²

Աղյուսակ 2.

	1 9 7 0		1 9 7 5		1 9 8 0		1 9 8 5	
	աուրի	%	աուրի	%	աուրի	%	աուրի	%
Ընդամենը համախառն եկամուտ	3220,3	100	4081,7	100	5743,2	100	6323,4	100
Այդ թվում՝								
Աշխատանքի վարձատրություն կուտակուսությունում	1359,7	42,2	1607,3	39,4	2511,0	43,7	2747,7	43,5
Աշխատավարձ	676,7	21,0	870,2	21,3	124,5	19,6	1188,8	18,8
Վճարումներ սպառման հանրային ֆոնդերից	185,9	5,8	368,6	9,0	432,4	7,5	582,9	9,2
Եկամուտներ (զուտ արդյունք) անձն. օժանդակ տնտեսությունից	935,1	29,0	1147,5	28,1	1336,3	23,3	1453,0	23,0
Եկամուտներ այլ աղբյուրներից	62,9	2,0	88,1	2,2	339,0	5,9	351,0	5,5

Ընտանիքների ժողովրդագրական նկարագրով և առանձնահատկություններով պայմանավորված՝ նրանց եկամուտների կառուցվածքը և միջին շրջանային եկամտի միջև առկա է որոշակի փոխակապվածություն:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3-ի տվյալները, որքան մեծ է բնտանիքի միջին շնչային եկամուտը, նույնքան զերակշռող է աշխատավարձը, և ընդհակառակը, որքան փոքր է բնտանիքի շնչային եկամուտը, նույնքան ցածր է աշխատավարձի տեսակարար կշիռը, և բարձր է սպառման հանրային ֆոնդերից ստացվող եկամուտների բաժինը: Սրանից ուղղակիորեն հետևում է, որ բազմանդամ բնտանիքներում վաստակված աշխատավարձի շափերի մեծացումը էապես չէր բարձրացնում բնտանիքի ընդհանուր կենսամակարդակը: Մյուս կողմից՝ ինչ-ինչ պատճառներով (սղաճ, բյուրոկրատական քաջջուկ) սպառման հանրային ֆոնդերից ստացված իրական եկամուտների նվազումը շոշափելիորեն վատթարացնում էր այդպիսի բնտանիքների կենսապայմանները՝ ընդհուպ աղքատության սահմանագիծը:

Ընտանիքի համախառն եկամտի կառուցվածքը՝ կախված երա միջին շնչային եկամտից (միջինը՝ մեկ ընտանիքի հաշվով)³

Աղյուսակ 3.

	Միջին շնչային եկամուտ (ամիսը)	Միջին շնչային եկամուտ (ամիսը)	
		մինչև 50 աուրի	150 աուրուց ավելի
Համախառն եկամուտ՝	աուրիներով	6284,2	5758,9
	տոկոսներով	100	100
Այդ թվում՝			
Աշխատավարձ՝	աուրիներով	1800,6	3658,9
	տոկոսներով	28,7	63,5
Կուտակուսականների աշխատանքի վարձատրություն՝	աուրիներով	82,6	672,6
	տոկոսներով	1,3	11,7
Եկամուտներ սպառման հանրային ֆոնդերից՝	աուրիներով	3071,8	345,9
	տոկոսներով	48,9	6,9
Եկամուտներ անձնական օժանդակ տնտեսություններից՝	աուրիներով	919,2	545,4
	տոկոսներով	14,6	9,5
Այլ եկամուտներ՝	աուրիներով	410,0	536,1
	տոկոսներով	6,5	9,3

² Տե՛ս նույն տեղը, էջ 43, 44:

³ Աղյուսակը կազմվել է Հայաստանի վիճակագրության կողմից 1981 թ. անցկացված բնտանիքների բյուլենների վիճակագրական հետազոտության նյութերի հիման վրա:

Այժմ ծանոթանանք ընտանիքների և կամուտների դինամիկային՝ ըստ եկամտի առանձին տեսակների (աղյուսակ 4):

1985—1990 թթ. Հայաստանի բնակչության եկամուտներն իրենց բոլոր ձևերով (բացառությամբ կոլտնտեսականների աշխատանքի վարձատրության) աճել են բավականաչափ բարձր տեմպերով: Ընդհանուր անվանական դրամական եկամուտները համարյա կրկնապատկվել են: Ընդ որում, սուսվել արագ են աճել ֆինանսական համակարգից ստացվող եկամուտները (3,7 անգամ): Սակայն միայն դրամական եկամուտների աճը ամենևին էլ բնակչության իրական կենսամակարդակի շարժման ցուցանիշ չէ, հատկապես եթե նկատի ունենանք, որ սկսած 1989 թվականից խիստ թափ է առնում սղաճը: Այդ պատճառով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այդ ժամանակահատվածում գների ինդեքսի փոփոխությունը:

Մինչև 1989 թ. պետական մանրածախ գների ինդեքսը բոլոր ապրանքների գծով փոխվել է աննշան. այն ընդհանուր առմամբ աճել է տարեկան մեկ կետով: Բացառություն են կազմել միայն ակոհոլային ապրանքները, որոնց գների ինդեքսը 1989-ին 1985-ի համեմատությամբ աճել է 44 կետով: Բայց արդեն 1990 թ. գների ինդեքսը մեկ տարում արագ բարձրացավ և 1985 թ. նկատմամբ կազմեց 112 %⁴: Հասկանալի է, որ ոչ կարգավորված շուկայում գները աճել են ավելի արագ: Սակայն, միևնույն ժամանակ բնակչության դրամական եկամուտները աճում էին ավելի արագ, քան սղաճը, որը և հանգեցրեց բնակչության իրական եկամուտների որոշ աճի: Հետևաբար, բնակչության դրամական եկամուտների աճը այդ տարիներին դեռևս կարելի էր դիտել որպես նրա կենսամակարդակի բարձրացման ցուցանիշ:

Հայաստանի բնակչության դրամական եկամուտների
գինամիկան 1985—1990 թթ. (միլիոն ռուբլի)⁵

Աղյուսակ 4.

	1985		1989		1990	
	ռուբլի	%	ռուբլի	%-ներով՝ 1985 թ. նկատմամբ	ռուբլի	%-ներով՝ 1985 թ. նկատմամբ
Ընդամենը՝ դրամական եկամուտներ	4295,0	100	3450,5	196,7	8082,0	188,2
Այդ թվում՝						
Աշխատավարձ	3009,0	100	3937,9	130,9	4368,6	145,2
Կոոպերատիվների աշխատողների աշխատանքի վարձատր. Կոլտնտեսականների աշխատանքի վարձատրություն	160,7	100	476,1	100	757,2	159,2*
Եկամուտներ գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից	178,3	100	121,3	75,5	124,9	77,7
Կենսաթոշակ, նպաստներ, թոշակներ	495,4	100	183,3	102,8	164,7	92,4
Մուտքեր՝ ֆինանսական համակարգից (ավանդներ, 3 %-անոց փոխառություններ, վիճակախաղ)	495,4	100	2520,4	508,8	898,2	181,3
	182,9	100	787,9	430,8	673,2	368,1

* 1989 թ. նկատմամբ

⁴ Տե՛ս «Статистический ежегодник Армении», Ереван, 1990, էջ 313:

⁵ Աղյուսակը կազմված է ըստ «Статистический ежегодник Армении» ժողովածուի, էջ 290:

Այդ նույն ժամանակահատվածում շարունակել են աճել սպառման հանրային ֆոնդերից բնակչությանը տրամադրվող դրամական հատկացումները: Եթե 1985 թ. այդ կարգի հատկացումները կազմել են 1352 մլն. ռուբլի, ապա 1990 թ.՝ 1793,0 մլն. ռուբլի, այսինքն՝ աճել են շուրջ 33 %-ով: Այդ տարիներին բավականին արագ են աճել նաև բնակչության այն եկամուտները, որոնք ստացվում էին անձնական օժանդակ տնտեսություններից: 1990-ին 1985 թ. նկատմամբ անձնական օժանդակ տնտեսություններից ստացվող եկամուտները համարյա կրկնապատկվեցին:

Բնակչության եկամուտների աճին զուգընթաց արագորեն ավելանում էր ընտանիքների ավանդների շահեր խնայողական բանկերում կամ դրամարկղերում: Այսպես, եթե Հայաստանի բոլոր ընտանիքների խնայողությունների գումարը 1985 թ. վերջում կազմել է 2681 մլն. ռուբլի (իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ 796 ռուբլի), ապա 1990 թ. այն կազմեց 5681 մլն. ռուբլի (բրնակչության մեկ շնչի հաշվով՝ 1639 ռուբլի), այսինքն՝ ավելի քան կրկնապատկվեց:

Համապատասխան փոփոխություններ կրեց նաև բնակչության կառուցվածքը՝ ըստ ընտանիքների միջին շնչային համախառն եկամտի: Ընտանիքների բյուջեների հետազոտության 1985 թ. և 1990 թ. տվյալները վկայում են, որ հինգ տարիների ընթացքում դրամական արտահայտությամբ ամենացածր միջին շնչային եկամտով ընտանիքների թիվը կրճատվել է ավելի քան 5 անգամ, իսկ ամենաբարձր միջին շնչային եկամտով ընտանիքներինը ավելացել շուրջ 7 անգամ: Այսպես, եթե 1985 թ. մինչև 75 ռուբլի շնչային եկամուտ ուներ ընտանիքների 27,4 % -ը, ապա 1990 թ.՝ ընդամենը 5,4 % -ը: Դրան հակառակ, եթե 250 ռուբլուց ավելի շնչային եկամուտ ունեցող ընտանիքների բաժինը 1985 թ. կազմում էր ընդամենը 1,7 %, ապա 1990 թ.՝ արդեն 13,0 %:

Բնակչության կենսամակարդակի առավել կարևոր բնութագրիչ է ընտանիքների անձնական սպառման ծավալը և կառուցվածքը: Այդ ցուցանիշը, ի տարբերություն դրամական եկամուտների, ունի այն առավելությունը, որ իր մեջ ներառում է սղաճի գործընթացը և այդ պատճառով առավել ճշգրիտ է արտացոլում ընտանիքների իրական բարեկեցության աստիճանը:

Դիտարկենք 1970—1985 թթ. Հայաստանի բնակչության անձնական ըսպառման դինամիկան ու կառուցվածքային տեղաշարժերը ըստ սոցիալական խմբերի՝ ինչպես բանվոր-ծառայողների, այնպես էլ կոլտնտեսականների ընտանիքների կտրվածքով, բնակչության մեկ շնչին ընկնող սպառման ցուցանիշներով (աղյուսակ 5):

1970—1985 թվականներին ոչ միայն անշեղորեն աճել է Հայաստանի բրնակչության կողմից պարենային ապրանքների սպառումը, այլև շոշափելիորեն բարելավվել է սպառման կառուցվածքը: Եթե հացամթերքի սպառումը կրճատվել է, ապա բանջարեղենի, կաթնամթերքի, մսի և ձվի սպառումը էապես ավելացել է, որը ևս բնակչության բարեկեցության աճի ցուցանիշ է: Այդ միտումը շարունակվել է և պահպանվել ընդհուպ մինչև 1990 թվականը, որն իր արտացոլումն է գտել ստորև բերվող աղյուսակ 6-ի տվյալներում:

Պարենային պարանֆների սպառումը բանվորների, ծառայողների ու կոլտնտեսականների ընտանիքներում (տարեկան միջինը՝ մեկ շնչի նաշվով, կիլոգրամներով)⁶
Աղյուսակ 5.

	1970		1975		1980		1985	
	բանվոր ծառայ.	կոլտն. տնակ.	բանվոր ծառայ.	կոլտն. տնակ.	բանվոր ծառայ.	կոլտն. տնակ.	բանվոր ծառայ.	կոլտն. տնակ.
Հացամթերք՝ վերածած ալյուրի	152,7	183,1	153,9	177,9	143,6	172,1	142,4	177,4
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	95,7	83,4	103,7	102,4	128,9	128,5	124,0	148,7
Մրգեր, հատապտուղներ և խաղող (ներառած չորացածը՝ վերածած թարմ մրգի)	60,6	48,8	55,4	54,1	57,0	58,5	58,4	78,5
Շաքար	14,2	14,5	16,5	15,6	15,6	14,3	15,0	22,3
Կաթ և կաթնամթերք (վերածած կաթի)	360,3	348,6	418,4	417,5	501,8	467,1	410,4	421,4
Կոնֆետ, հալվա և այլն	3,8	2,7	3,7	3,4	4,2	3,1	5,2	3,4
Կարտոֆիլ	42,5	57,3	54,3	62,1	57,8	68,3	52,6	79,6
Միս և մսամթերք (վերածած մսի)	29,8	20,5	37,6	29,2	41,0	31,8	40,7	34,9
Չուկ և ձկնամթերք	4,5	2,7	4,2	2,4	5,2	3,2	5,3	3,0
Ընդ. (հատ)	125	147	132	181	197	219	171	201

Հիմնական պարենային պարանֆների սպառումը բնակչության մեկ շնչի նաշվով (տարեկան, կգ)⁷

Աղյուսակ 6.

	1985	1989	1990
Միս և մսամթերք՝ վերածած մսի (ներառյալ ճարպը և ենթամթերքը)	49,0	53,0	45,0
Կաթ և կաթնամթերք (վերածած կաթի)	433,0	453,0	421,0
Չուկ (հատ)	148,0	159,0	139,0
Չուկ և ձկնամթերք	4,9	7,1	7,4
Շաքար	28,7	32,2	34,6
Կարտոֆիլ	65,0	60,0	49,0
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	135,0	152,0	122,0
Մրգեր և հատապտուղներ (առանց գինու վերածելու)	47,0	45,0	42,0
Հացամթերք (հաց և մակարոնեղեն՝ վերահաշված ալյուրի և այլն)	134,0	126,0	109,0

Աղյուսակ 6-ի տվյալները միաժամանակ ցույց են տալիս, որ արդեն 1990 թվականին նկատելի է ոչ միայն բնակչության կողմից պարենային ապրանքների սպառման աճի տեմպերի անկման, այլև նրանց որոշ տեսակների (մսի, կաթնամթերքի, ձվի) սպառման բացարձակ կրճատման երևույթը:

Նկատույնների և կենսամակարդակի աճի կարևոր ցուցանիշ է ընտանիքների կողմից ոչ պարենային ապրանքների սպառման աճը և դրանում կատարված կառուցվածքային դրական տեղաշարժերը, որոնք իրենց արտացոլումն են գտել Հայաստանի բանվոր-ծառայողների և կոլտնտեսականների ընտանիքների բյուջեների ծախսային մասում (աղյուսակ 7):

⁶ Աղյուսակը կազմվել է ըստ «Бюджеты семей рабочих, служащих и колхозников в 1970—1985 гг.» ժողովածուի, Երևան, 1986, էջ 24, 58:

⁷ Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1990 թվականին», Երևան, 1991, էջ 67:

Ոչ պարենային ապրանքների գնելու համար բանվոր-ծառայողների ընտանիքների ծախսերի աճը 1985 թվականին 1970-ի նկատմամբ կազմել է 165,3 %, իսկ կոլտնտեսականներին՝ 239,0 %: Ընդ որում, ավելի արագ են աճել պատրաստի հագուստեղենի գնման ծախսերը (համապատասխանաբար՝ 200,0 % և 270,0 %) :

Բնակչության բարեկեցության մակարդակի ցուցանիշ է նաև երկարատև օգտագործման կուլտուր-կենցաղային ապրանքներով բնակչության ապահովվածությունը: 1985—1990 թթ. ընթացքում այդպիսի ապրանքների վաճառքը պետական և կոոպերատիվ մանրածախ առևտրում ավելացել է առաջանցիկ տեմպերով պարենային ապրանքների վաճառքի, ինչպես նաև բնակչության աճի տեմպերի համեմատությամբ: Հատկապես արագ են աճել ռադիոսարքավորումների, կարի մեքենաների և կահույքի գնումների ֆիզիկական ծավալները (համապատասխանաբար՝ 79,4, 90,0 և 116,9 % -ով)⁸: Փաստերը վկայում են, որ Հայաստանում արագորեն բարձրանում էր կուլտուր-կենցաղային և տնտեսական նշանակության երկարատև օգտագործման ապրանքներով բնակչության ապահովվածությունը, ինչը խոսում էր նրանց կենսապայմաններում տեղի ունեցող դրական տեղաշարժերի մասին:

Թանկարժեքի, ծառայողների ու կոլտնտեսականների բնտանիքների գրամական ծախսերը ոչ պարենային ապրանքներ գնելու համար (միջինը՝ բնտանիքի մեկ շնչի ձաշվով, տարեկան, ուսրի)⁹

Աղյուսակ 7.

	1970		1975		1980		1985	
	բանվոր ծառայ.	կուլտուր-տեսակ.	բանվոր ծառայ.	կուլտուր-տեսակ.	բանվոր ծառայ.	կուլտուր-տեսակ.	բանվոր ծառայ.	կուլտուր-տեսակ.
Ոչ պարենային ապրանքներ գնելու ամբողջ ծախսը Այդ թվում՝ կոշիկի	184,7	177,6	235,1	293,9	288,0	354,8	305,3	425,5
Պատրաստի հագուստեղենի, սպիտակեղենի, զլխարկների, (ներառած դրանց վերանորոգումը)	37,8	28,1	42,2	34,2	41,3	40,8	47,9	46,9
	42,4	41,5	55,7	52,5	65,1	78,7	84,9	112,1

Համեմատաբար արագ են աճել նաև բնակչության ծախսումները կուլտուր-կենցաղային ծառայությունների վճարման համար: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 8-ի տվյալները, 1970—1985 թթ. ընթացքում այդպիսի ծառայությունների համար ընտանիքների կատարած ծախսերը աճել են՝ բանվոր-ծառայողներինը շուրջ 1,3 անգամ, իսկ կոլտնտեսականներին՝ շուրջ 2,1 անգամ:

Խորհրդային Միությունում բնակչության կողմից ծառայությունների սպառումը չէր սահմանափակվում միայն ընտանիքների բյուջեների համապատասխան ծախսումներով, քանի որ ընտանիքներն անվճար կամ արտոնյալ պայմաններով ծառայություններ էին ստանում այսպես կոչված հանրային սպառման ֆոնդերից: Դա վերաբերում էր ամենից թուաջ անվճար կրթությանը

⁸ Տե՛ս «Статистический ежегодник Армении», էջ 310:

⁹ Աղյուսակը կազմված է «Բանվորների, ծառայողների ու կոլտնտեսականների բնտանիքների բյուջեները...» ժողովածուի նյութերով, էջ 18, 52:

(դպրոցից մինչև ասպիրանտուրա ներառյալ), անվճար սկզբունքներով գործող մանկամստություններին և մանկապարտեզներին, անվճար բուժօգնությանը, ինչպես նաև բնակարանային և կոմունալ ծառայությունների աննշան վարձին և այլն: Որպեսզի ամփոփ պատկերացում ունենանք վերը շարադրվածի մասին, դիմենք աղյուսակ 9-ի թվերին:

Բանվորների, ծառայողների ու կուլտեսականների ընտանիքների ծախսումները կուլտուր-կենցաղային ծառայությունների վրա (տարեկան միջինը՝ ընտանիքի հաշվով)¹⁰

Աղյուսակ 8.

	1970 թ.				1985			
	բանվոր-ծառայող նուր.	%	կուլտեսական. նուր.	%	բանվոր-ծառայող նուր.	%	կուլտեսական. նուր.	%
Կուլտ.-կենցաղ. և այլ ծառայութ. ծախսեր, ընդամենը	324,3	100	207,3	100	424,5	130,9	44,8	212,5
Այդ թվում՝								
Կենցաղ. ծառայութ. վճար կուլտուրակ. և այլ ծառայութ. ծախսեր	56,9	100	90,1	100	78,1	137,3	139,7	155,0
	267,4	100	119,2	100	346,5	129,6	305,1	256,0

Սպառման հանրային ֆոնդերից ՀՍՀ բնակչության ստացած վճարումները և արտոնությունները¹¹

Աղյուսակ 9.

	1985	1989	1990
Վճարումներ և արտոնություններ՝ ընդամենը, մլն. ուր.	1352,0	1677,4	1793,4
Այդ թվում՝			
լուծավորություն (անվճար կրթություն, կուլտուր-լուծավորչական աշխատանքներ)	454,2	516,8	559,4
Առողջապահություն և ֆիզկուլտուրա (անվճար բժշկական օգնություն, սանիտարական-առողջապահական սպասարկում, ֆիզ. դաստիարակ.)	181,7	247,1	259,2
Սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն	478,0	648,9	702,7
Պետության ծախսերը բնակարանային ֆոնդի պահպանման վրա	63,9	57,9	53,8
Վճարումները և արտոնությունները բնակչության մեկ շնչի հաշվով, ուրբի	404,0	475,0	504,0

1990 թվականին անվճար և արտոնյալ պայմաններով Հայաստանի բրնակչությանը մատուցված ծառայությունների արժեքը կազմեց 1372 մլն. ուրբի, որը սպառման հանրային ֆոնդերի ընդհանուր ծավալի 76,0 %-ն էր: Չընայած Խորհրդային Միությունում հանրային սպառման ֆոնդերը, մասնավորապես անվճար ծառայությունները բաշխվում էին ոչ միշտ արդարացի (դրանցից գերազանցապես օգտվում էր հասարակության վերնախավը), այնուամենայնիվ բնակչության բոլոր խավերի որոշակի պահանջմունքների բավարարման հարցում դրանց դերը շատ մեծ էր:

¹⁰ Տե՛ս «Статистический ежегодник Армении», էջ 310:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 293:

3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ,
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԹԵՐԱՊԱԷՆՈՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախկին Խորհրդային Միությանում բնակչության եկամուտների տարբերակումը պայմանավորված էր մի քանի գործոններով: Քանի որ ընտանիքի հիմնական եկամուտը աշխատանքի դիմաց ստացվող եկամուտն էր, գերազանցապես աշխատավարձը (70—75 %), այդ պատճառով նախ և առաջ հենց դա էր պայմանավորում բնակչության եկամուտների տարբերակման աստիճանը: Աշխատավարձի տարբերակումը իր հերթին պայմանավորված էր մի շարք սոցիալ-տնտեսական որոշիչներով (աշխատողի որակավորումը, աշխատանքի լարվածությունը, աշխատանքի ծանրաբեռնվածությունը, աշխատանքի սոցիալական արժեքը և գնահատականը, աշխատուժի առաջարկը և պահանջարկը, աշխատողի կրթական և կուլտուրական մակարդակը, աշխատողի տարիքը, սեռը և այլն): Քանի որ աշխատավարձի շահերը և դրույքները պայմանավորող ինդիկատորները անհամաչափ են բաշխված եղել ըստ տարածաշրջանների, ժողովրդական տնտեսության ճյուղերի, այդ պատճառով անխուսափելի է դառնում աշխատավարձերի տարբերակումը: Այսպես, այլ հավասար պայմաններում ամենաբարձր աշխատավարձ նկատվում է 35—40 տարեկան տղամարդկանց ու կանանց մոտ: Բացի դրանից, աշխատավարձի մակարդակը պայմանավորող հիմնական գործոններն են կրթությունը և աշխատանքի ստաժը, քանի որ կրթությունը բարձրացնում է աշխատանքի որակը, իսկ ստաժը՝ աշխատանքի փորձը և հմտությունը: Այսպես օրինակ, եթե մինչև 4-րդ դասարանի կրթություն ունեցողների միջին ամսական աշխատավարձը ԽՍՀՄ-ում 1978 թ. կազմում էր ընդամենը 126,2 ռուբլի, ապա բարձրագույն կրթություն ունեցողներինը հասնում էր 182,0 ռուբլու¹²:

Ընտանիքի համախառն եկամուտների մեջ աշխատավարձի բաժինը պայմանավորված էր նաև նրա աշխատող անդամների թվով: Որքան ընտանիքում մեծ էր շաշխատողների՝ խնամառուների թիվը, այնքան, այլ հավասար պայմաններում, փոքր էր ընտանիքի նյութական ապահովվածությունը: Եվ հակառակը՝ որքան մեծ էր ընտանիքի աշխատողների թիվը, այնքան, այլ հավասար պայմաններում, բարձր էր նրա նյութական ապահովվածությունը: Հիմնականում դրանով էր բացատրվում մերձբալթյան հանրապետությունների ընտանիքների նյութական բարձր ապահովվածությունը միջինասիական հանրապետությունների նկատմամբ: Ընդ որում, բացի անաշխատունակներից, ընտանիքում խնամառու է համարվում նաև աշխատունակ գործազուրկը և այլն:

Խորհրդային Իրականության մեջ ընտանիքի անաշխատունակ անդամները տարբեր ձևերով սպառման հանրային ֆոնդերից ստանում էին որոշ դրամական և այլ բնույթի նյութական օգնություն: Սակայն դա չէր կարող էապես բարձրացնել ընտանիքի նյութական ապահովվածությունը: Այդ պատճառով, որպես օրինաչափություն, ընտանիքի խնամառուների թվի աճը ուղեկցվում էր միջին շնչային եկամտի իջեցումով, և այդպիսի ընտանիքները դասվում էին թերապահովված ընտանիքների թվին:

Հայաստանի բանվորների, ծառայողների և կուլտնտեսականների ընտանիքների բյուջեների 1981 և 1989 թթ. միանվագ հետազոտությունների ամփոփ տվյալներով պարզվել է, որ ամսական 200—300 ռ. զումարային աշ-

¹² Տե՛ս «Семья и народное благосостояние в социалистическом обществе», Под ред. Н. Римащевской и С. Карапетяна, М., 1985, էջ 72:

խատավարձ ստացող ընտանիքները կազմել են ընտանիքների ընդհանուր թվի 27,1 % -ը, 300—400 ռ. ստացողները՝ 21,6 % -ը և 400 ռ. ավել ստացողները՝ 21,7 % -ը: Մյուս կողմից՝ ամսական 300—400 ռ. համախառն եկամուտ ունեցող ընտանիքները կազմել են բոլոր ընտանիքների 23,7 % -ը, 400—500 ռ. ունեցողները՝ 20,7 % -ը և 500 ռ. ավել ունեցողները՝ 23,8 % -ը: Ընդ որում, ամսական 500 ռ. ավել համախառն եկամուտ ունեցող ընտանիքների շուրջ 65,4 % -ը ստանում էր 400 ռ. ավել գումարային աշխատավարձ, 6,7 % -ը՝ 300—400 ռ., 12,6 % -ը՝ 200—300 ռ. և միայն 5,3 % -ը՝ ամսական մինչև 200 ռ. գումարային աշխատավարձ:

Այսպիսով աշխատավարձը, որպես հիմնական եկամուտ, ուներ որոշակի դեր ընտանիքի համախառն եկամուտների ձևավորման ու շափերի վրա: Որքան մեծ էր ընտանիք մուտք գործող գումարային աշխատավարձը, այնքան բարձր էր նրա համախառն եկամուտը, հետևաբար և նյութական ապահովվածությունը:

Աշխատավարձից բացի ըստ եկամուտների ընտանիքների տարբերակումը պայմանավորված էր նաև սպառման հանրային ֆոնդերից, անձնական օժանդակ տնտեսությունից և այլ աղբյուրներից ստացված եկամուտների չափերով, ինչպես նաև ընտանիքի ժողովրդագրական իրավիճակով: Այդ պատճառով էլ ըստ բարեկեցության աստիճանի ընտանիքների տարբերակումը կարելի է արտահայտել միայն նրանց միջին շնչային եկամտի կամ միջին շնչային սպառման ցուցանիշներով: Հենց միջին շնչային եկամուտն է, որ արտացոլում է ինչպես աշխատավարձի, այնպես էլ ընտանիք մուտք գործող եկամուտների մյուս ձևերի չափերը և տարբերակումը:

Ընտանիքների զտակարգումը ըստ միջին շնչային գումարական եկամտի (100 ընտանիքի հաշվով, միլիոն ռուբլի)¹³

Աղյուսակ 10.

Ընտանիքների թիվը	Այդ թվում՝ ըստ միջին շնչային գումարական եկամտի, ամսական, ուրիշներով							
	մինչև 50,0	50,1—75,0	75,1—100,0	100,1—125,0	125,1—150,0	150,1—175,0	175,1—200,0	200 և ավելի
Բ ու ռ								
ընտանիքները								
1981 թ. = 100,0	5,2	23,1	26,2	20,2	11,1	5,6	3,4	5,2
1989 թ. = 100,0	1,1	6,7	14,4	21,3	15,6	14,2	8,5	18,2

Խորհրդային Միությունում 1975 թ. մտցվեց սոցիալական միևիմուր ամսական 50 ռուբլու չափով, 1981 թ. այն հասցվեց 60 ռուբլու, իսկ 1984 թ.՝ 70 ռուբլու¹⁴: Ուստի, վերը բերված աղյուսակի տվյալներով ստացվում է, որ 1981 թ. Հայաստանում ընտանիքների ավելի քան 28 % -ը գտնվել է նվազագույն ապահովվածության սահմաններում, իսկ 5,2 % -ը՝ աղքատության շեմին:

Իրավիճակը չփոխվեց 1989 թ.: Եթե 1984 թ. ընտանիքների սոցիալ-նյութական ապահովվածության նվազագույն սահմանը կազմում էր ամիսը 70,0 ռուբլի, ապա, ամենահամեստ հաշվարկներով, 1989 թ. այն ամենաթիշը կը հասներ 80 ռուբլու: Դա նախ և առաջ նշանակում է, որ, ըստ նույն

¹³ Աղյուսակը կազմված է Հայաստանի բանվորների, ծառայողների ու կուլտեստեպականների բյուրոների 1981 և 1989 թթ. միանվագ հետազոտության նյութերով:

¹⁴ Տե՛ս, «Россия, бедность, подпитка и воздействия. Предварительная оценка», т. I, 1994 թ.:

աղյուսակի տվյալների, եթե 1981 թ. աղքատության շեմին էր ընտանիքների 5,2 %-ը, ապա 1989 թ. այն արդեն գերազանցում էր 7,8 %-ը: Ուստի, 80-ական թվականներին աղքատ ընտանիքների տեսակարար կշիռը ոչ միայն չի կրճատվել, այլև ավելացել է: Բայց դա բոլորը չէ: Այդ նույն ժամանակ դրան զուգահեռ արագ տեմպերով են աճել առավել ապահովված ընտանիքների եկամուտները: Այսպես, եթե 1981 թ. ամսեկան 200 ուրլի և ավելի միջին շնչային եկամուտ ստացողների տեսակարար կշիռը եղել է 5,2 %, ապա 1989 թ. այն հասավ 18,2 %-ի:

Որպեսզի ավելի ճշգրիտ որոշենք տարբեր ապահովվածության ընտանիքների եկամուտների տարբերակումը, անհրաժեշտ է ընտանիքների միջին շնչային եկամուտները համադրել ստորին և վերին դեցիլների սկզբունքով: Վերը նշված հետազոտության նյութերով հաշվարկել ենք, որ 1981 թ. ստորին դեցիլի ընտանիքների միջին շնչային եկամուտը կազմել է ամսական 47,7 ուրլի, իսկ վերինը՝ 220 ուրլի: Վերին դեցիլը, այսպիսով, 4,6 անգամ գերազանցել է ստորինին: 1989 թ. ստորին դեցիլի ընտանիքների միջին շնչային եկամուտը կազմել է 60,5 ուրլի, իսկ վերինը՝ 408 ուրլի: Ուստի 1989 թ. վերին դեցիլը ստորինին գերազանցել է 6,7 անգամ՝ 1981 թ.-ի 4,6-ի դիմաց: Սրանք են փաստերը, այսպիսին էր իրականությունը:

Այժմ տեսնենք, թե ինչպես են ժողովրդագրական գործոններն ազդել ընտանիքների եկամուտների և սպառման տարբերակման վրա: Այդ տեսակետից այդպիսի կարևոր գործոններից են ընտանիքի կազմը և երեխաների թիվը:

Ընտանիքների դասակարգումն ըստ միջին շնչային եկամտի, բնօրինի չափերի և երեխաների թվի (տակառեքով)¹⁵

Աղյուսակ 11.

Ընտանիքների թիվը	Այդ թվում՝ ըստ ամսեկան միջին շնչային համախառն եկամտի, ուրլի								Բացի այդ հարցանակում գրված 60 և ավելի դեցիլի ընտանիքների	
	մինչև 50,0	50,1	75,1	100,1	125,1	150,1	175,1	200,1 և ավելի		
Բոլոր ընտանիքները	100,0	5,2	23,1	26,1	20,2	11,1	5,6	3,4	5,2	13,2
Ընտանիքներ, բաղկացած 1 հոգուց	100,0	4,9	16,0	11,6	7,0	12,1	4,3	11,8	32,3	8,9
6 և ավելի հոգուց	100,0	14,3	36,2	27,2	17,2	2,9	2,1	—	0,1	28,1
Մինչև 16 տարեկան երեխաներով	100,0	6,9	28,3	30,3	21,8	8,8	2,3	1,3	0,3	16,7
Այդ թվում՝										
1 երեխա	100,0	2,3	20,0	25,6	30,2	13,0	4,2	3,9	0,8	8,2
5 և ավելի երեխա	100,0	37,1	11,0	5,1	15,1	—	1,7	—	—	30,9

Բերված աղյուսակի տվյալները համոզիչ վկայում են, որ ընտանիքի չափերը և միջին շնչային եկամուտը գտնվում են հակադարձ կախման մեջ: Ընտանիքի չափերի մեծացման հետ նրա միջին շնչային եկամուտը նվազում է: Եվ, ընդհակառակը, ամսական մինչև 60 ուրլի շնչային եկամտով (նվազագույն ապահովվածություն) 6 և ավելի անդամներով ընտանիքների բաժինը կազմել է 28,1 %՝ 1 հոգուց բաղկացած ընտանիքների 8,9 %-ի դիմաց:

¹⁵ Աղյուսակը կազմված է Հայաստանի բանվորների, ծառայողների և կուտոտեռականների ընտանիքների բյուրոների 1981 և 1989 թթ. միանվագ հետազոտությունների նյութերով:

Այդպիսի կորեկյացիոն կախվածութիւն զոյութիւն ունի նաև ընտանիքում երեխաների թվի և նրա նյութական ապահովվածութեան միջև: Այսպես, եթե 1 երեխայով և մինչև 60,0 ոտւրլի միջին եկամտով ընտանիքների բաժինը կազմել է ընդամենը 8,3 %, ապա 5 և ավելի երեխաներով ընտանիքներին՝ 50,9 %: Հետևաբար, հենց բազմազավակ ընտանիքներն են գտնվել աղքատութեան և թերապահովվածութեան տիրույթում: Իսկ 80-ական թթ. Հայաստանի համար բնութագրական էին բազմազավակ ընտանիքները: Իս նշանակում է, որ միևնույն բնութի ժողովրդագրական գործոնները, եթե Մերձարլթիկայի հանրապետութիւններում դրականորեն էին ներգործում ընտանիքների կենսամակարդակի վրա, ապա Հայաստանում, ընդհակառակը, այդ գործոնները (ընտանիքների բազմազավակութիւնը և անդամների մեծ թիվը) հանգեցնում էին միջին շնչային եկամտի նվազեցման, դրանով իսկ ընտանիքների անհամեմատ ավելի մեծ մասը դարձնելով աղքատ կամ թերապահովված:

Այսպիսով, Հայաստանում աղքատութիւնը հնարավոր կլինի հաղթահարել ոչ միայն գործազրկութեան կրճատման, ընտանիքների գումարային աշխատավարձի ավելացման ճանապարհով, այլև վարելով որոշակի սոցիալական քաղաքականութիւն, որը կկարողանա հակազդել վերոհիշյալ ժողովրդագրական գործոնների բացասական ներգործութեանը:

Ընտանիքների կենսամակարդակի տարբերակման ցուցանիշներից է նաև նրանց համախառն եկամտի օգտագործման կառուցվածքը՝ կախված միջին շնչային եկամտի շափերից: Հայտնի է, որ ընտանիքի ծախսումների (սպառման) կառուցվածքը նրա ապահովվածութեան հայելին է: Որքան բարձր է ոչ պարենային ապրանքների (մասնավորապես երկարատև օգտագործման ապրանքների) և ծառայութիւնների ձեռքբերման ծախսերի բաժինը, այնքան բարձր է տվյալ ընտանիքի ապահովվածութիւնը և ընդհակառակը: Այդ պատճառով ցածր միջին շնչային եկամտով ընտանիքներում սննդի ծախսերի բաժինը բարձր է, ինչը նվազ ապահովվածութեան ցուցանիշ է:

Համախառն եկամտի օգտագործումը տարբեր միջին շնչային եկամտով բնակիչներում, 1981 թ. (տոկոսներով)¹⁶

Այլուսակ 12.

	Օգտագործումը մարդու համար համարում եկամտը	Այլ թվում						
		Սննդի համար	Ոչ պարենային ապրանքների համար	Ավտո-լային կառուցվածքի համար	Ծառայութիւններ, վճարման համար	Հարկեր, տուրքեր, մուծումներ	Այլ ծախսեր	Կոտորում
Քոյոր ընտանիքները	100,0	43,7	28,3	4,3	7,7	7,2	6,1	2,7
Այդ թվում՝ ամսական միջին շնչային եկամտով, ոտուրլիներով								
մինչև 50,0	100,0	60,1	24,3	4,3	7,2	6,1	8,5	-10,4
200,1 և ավել	100,0	32,5	27,1	2,8	6,5	7,4	6,0	17,7

Այլուսակ 12-ը ցույց է տալիս, որ ընտանիքի համախառն եկամտի օգտագործման կառուցվածքը տարբերակված է՝ կախված նրա միջին շնչային եկամտից: Որքան բարձր է միջին շնչային եկամուտը, այնքան ցածր է սննդի համար ծախսերի բաժինը, և բարձր է կուտակման բաժինը: Եվ ընդհակա-

¹⁶ Ըստ նույն աղբյուրի:

ապրիլի Մինչև 50,0 ուրի միջին շնչային եկամտով խմբում սննդի համար ծախսերի բաժինը ամենաբարձրն է (60,1 %), և այդպիսի ընտանիքները կուտակման փոխարեն ունեն պարտքեր (-10,4):

Հնտանիքների համախառն եկամտի օգտագործման կառուցվածքը 1989 թ. ըստ էության պահպանվել է: Այսպես, սննդի համար օգտագործվող եկամտների բաժինը նույնպես կազմել է 43,4 % բոլոր ընտանիքների համար:

Այսպիսով, փաստերը և դրանց վիճակագրական վերլուծությունը ցույց են տալիս, որ անցած 80-ական թվականներին, ընդհուպ մինչև 1990 թվականը, Խորհրդային Միությունում, այդ թվում և Խորհրդային Հայաստանում, բնակչության կենսամակարդակի և սոցիալական պրոբլեմների լուծման ոլորտում տեղ են գտել հետևյալ հիմնական միտումներն ու փոփոխությունները.

— առաջին, իրոք, ամբողջությամբ վերցրած բնակչության նյութական ապահովվածությունը աճել է, և բարձրացել ընտանիքների կենսամակարդակը: Այսպես, եթե 1981 թ. բոլոր աշխատողների միայն 8,6 %-ն էր նտանում ամսական 175 ուրի միջին շնչային համախառն եկամուտ, ապա 1989 թ.՝ 26,7 %-ը,

— երկրորդ, շնայած Խորհրդային տնտեսագիտական գրականության մեջ և պաշտոնական կառավարական փաստաթղթերում չէր ընդունվում աղքատության՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթի գոյությունը (այլ նշվում էր միայն թերապահովված ընտանիքների առկայության մասին), իրականում այն ոչ միայն եղել է, այլև աճելու միտում է ունեցել,

— երրորդ, վերը հիշատակված հետազոտությունների նյութերի վերլուծությունը հերքում է Խորհրդային Միությունում տարածում գտած այն տեսակետը, ըստ որի բնակչության կենսամակարդակների տարբերությունները գնալով միտում ունեն կրճատվելու և համահարթվելու: Աղյուսակային տվյալները և ընդհանրապես սոցիոլոգիական բոլոր հետազոտությունների նյութերի վերլուծությունը հաստատում են ճիշտ հակառակ գործընթացների և միտումների առկայությունը: 1980—1990 թթ. Հայաստանում ոչ միայն տեղի չունեցավ թերապահովված և առավել բարձր ապահովված ընտանիքների կենսամակարդակների համահարթեցում, այլ դրանց տարբերությունները էլ ավելի խորացան:

Г. А. ГАРИБЯН, А. А. МАРЗПАНЯН—Тенденции изменений доходов и уровня жизни населения Армении (1980—1990 гг.).—Всестороннее исследование происходящих в 1980-ые годы изменений доходов, потребления и уровня жизни населения Армении создает необходимые предпосылки для понимания тех процессов, которые инерционно продолжались в этой области в 1990-ые годы.

Статистические данные и их анализ показывают, что в области социальных проблем и уровня жизни населения в Армении имели место следующие основные тенденции:

— во-первых, доходы и материальная обеспеченность семей в целом действительно возросли, что привело к росту уровня жизни населения республики;

— во-вторых, хотя в советской экономической литературе и в официальных документах не признавалось наличие бедности как социально-экономического явления, на самом деле всевозрастающая часть малоимущих семей оказалась в границах бедности;

— в-третьих, провозглашенная советским государством политика уравнивания различий в уровне жизни населения фактически провалилась. В Армении в период 1980—1990 гг. дифференциация семей по доходам и уровню жизни продолжала углубляться, разрыв между фактически бедными и богатыми слоями населения не только не сокращался, но все более увеличивался.